ճարի շինութեան վերջանալը, խնդրեցի օծման հրաման և նորին Վեհափառութիւնը կոնդակաւ 'ի 15-ն նոյն հոկտեմբ. № 522, բարեհաճեցաւ հրամայել օծանել զնորակառոյց տաճարն. և ահա այն կոնդակի պատճէնը.

Կնիքն
1885.

«Մակար ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական մայր Եկեղեցւոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի։

«Գերապատիւ Առաջնորդի թեմին Հայոց Շամախւոյ՝ Սրբազան Մեսրովբ Եպիսկոպոսի սիրելոյ մերում 'ի Տէր, ողջոյն եւ օրհնութիւն:

'Ի յայտարար զրութենէ Ձերմէ 'ի 5-ն հոկտեմբերի ընդ համարաւ 65, տեղեկացեալ մեր աւարտման շինութեան հոյակապ տաճարի Սրբոյն Ստեփաննոսի՝ որ 'ի Սաղիան, ուրախացաք յո՛յժ, ուստի եւ տամք Ձեզ իրաւունս օծանելոյ զայն տուն Աստուծոյ ըստ ծիսի եւ արարողութեան Հայաստանեացս սուրբ Եկեղեցւոյ։ Մեծայոյս եմք, զի յետ այսորիկ աշխատ լինիջիք զտաճարն զայն հոյակապ պայծառացուցանել ներքին եւ արտաքին բարեզարդութեամբ եւ առընթեր նմին պահպանել զվանական դպրոց մի՝ առ ի պատրաստել զարժանաւորս պաշտօնեայս եւ սպասաւորս 'ի նմին։»

«Ողջ լերո՛ւք 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս
«ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

№ 522.

'Ի 15-ն հոկտեմբերի 1887 ամի փրկչական եւ 'ի մերում թուականութեան ՌՅԼԷ. «'ի Ս. Էջմիածին:»